ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈՒՄ- ԱՇ-033

ք. Երևան 25 հունվար 2018թ.

«Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, մի կողմից «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի, մյուս կողմից, (Կատարողը և Պատվիրատուն միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Մոդուլային գնումներ/ARMEPS-PPCM/ օգտագործմանն ուղղված դասընթաց:

- էլեկտրոնային գնումների պլանավորում
- Պայմանագրերի կառավարում
- Գնումների հաշվետվողականության
- Մոդուլների համակարգ

1.2. Ծրագրի ժամկետը սահմանված է 2 օր:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. Պահանջել Կատարողից մասնագիտական ուսուցումն իրականացնել պատշաճ որակով և սույն պայմանագրի 1.2 կետում սահմանված տևողությամբ:

2.2. Պատվիրատուն պարտավոր է.

2.2.1. Ապահովել 1.1 ենթածրագրում իր աշխատակազմի մեկ ունկնդրի մասնակցությունը,

2.2.2. Մինչև Ծրագիրը սկսելը Կատարողի բանկային հաշվին փոխանցել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

2.3. Կատարողն իրավունք ունի.

2.3.1. Մասնագիտական ուսուցման ծրագրի մշակումը և մատուցման ձևի ընտրությունն իրականացնել իր հայեցողությամբ.

2.3.2. Մինչև Ծրագիրն սկսելը Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Ծրագիրն սկսել ֆինանսական միջոցներն ստանալուց 5 օրվա ընթացքում.

2.4.2. Ծրագիրն իրականացնել բարձր որակով և պատշաճ մակարդակով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունը, որը մատուցվում է սույն պայմանագրի 2.2.1 կետում նշված անձանց համար սահմանվում է 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

4. Վեճերի լուծման կարգը

4.1. Սույն պայմանագրի կատարման շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի կողմից.

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող մեկ հայերեն օրինակից, յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ.

5.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25 դեկտեմբերի 2017թ.

6. Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային ռեկվիզիտները

Գնորդ
«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլնեցի 68
ՀՎՀՀ՝ 02602449

Գործադիր տնօրեն՝ ----------Ա. Աբրահամյան

Կատարող
«Մաստեր Սթայլ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Սարմենի 1, 2/1տարածք

ՀՎՀՀ 01571846

Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163008180909

Տնօրեն՝ ----------Ա. Սարգսյան